



084, Армения, Ереван, ул.Зор. Андраника 1
Тел: 72 00 10 Факс: 72 01 21

Zor. Andranikst. 1, Yerevan, Armenia, 0084
Tel: 72 00 10. Fax: 72 0121
E-mail: hvenbec@gmail.com

**ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈՒՆ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՅԵՐ» ՓԲԸ
0084 Հայաստան, Երևան, Զոր. Անդրանիկի 1,
Հեռ. 72 00 10, Ֆաքս. 72 01 21**

N 18-2
“09” “02” 2015թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

«ԲԱՐՁՐԱՎՈՒՆ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՅԵՐ» ՓԲԸ ՎԱՐՉԱՊԱՐԱՏԻ ԵՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ «Հրդեհային անվտանգության» մասին օրենքով, «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգով նախատեսված պահանջներով աշխատողների գիտելիքների ստուգման նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1.«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ում ստեղծել գիտելիքները ստուգող մշտական գործող կենտրոնական քննական հանձնաժողով հետևյալ կազմով՝

Նախագահ	Ս. Իգիտբաշյան	- Գլխավոր ճարտարագետ
անդամներ	Լ. Ադամյան	- Գլխավոր ճարտարագետի տեղակալ
	Ս. Արշակյան	- Գլխավոր ճարտարագետի տեղակալ
	Ա. Պետրոսյան	- Գլխավոր ճարտարագետի տեղակալ
	Ս. Սոպիկյան	- ՌՊԱ և ԲՓԾ պետ
	Յու. Հովհաննիսյան	- ԱԱԱ և ՀԾ պետ
	Գ. Մանուկյան	- ԿԾ պետ

2. Կենտրոնական քննական հանձնաժողովին՝ (Ս. Իգիտբաշյան)

- 2.1 Գիտելիքների ստուգումն անցկացնել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ գլխավոր ճարտարագետի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն:
- 2.2 Գիտելիքների ստուգումն անցկացնել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ վարչապարատի այն աշխատողների հետ, որոնք համարվում են միջին և բարձր ռիսկայնության պայմաններում աշխատանք կատարողներ համաձայն «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» - ի տեխնիկական կանոնակարգի պահանջների:
- 2.3 Մասնաճյուղերում ստեղծել գիտելիքները ստուգող մշտական գործող քննական հանձնաժողով:
- 3 Մասնաճյուղերի քննական հանձնաժողովներին՝
 - 3.1 Մասնաճյուղի աշխատակիցների գիտելիքների ստուգումն անցկացնել մասնաճյուղի գլխավոր ճարտարագետի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն:

- 3.2 Մասնաճյուղերում քննական հանձնաժողովի կողմից աշխատակիցների գիտելիքների ստուգման ժամանակ անհրաժեշտության դեպքում ապահովել կենտրոնական քննական հանձնաժողովի անդամի (անդամների) մասնակցությունը:
- 3.3 Ամեն տարվա մինչև հունվարի 20-ը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ԱԱԱ և Հ ծառայություն ներկայացնել մասնաճյուղի քննական հանձնաժողովի կազմը (հրամանի պատճեն) և այն աշխատողների գիտելիքների ստուգման ժամանակացույցը, որոնք համարվում են միջին և բարձր ոլորտային պայմաններում աշխատանք կատարողներ համաձայն «էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ»-ի տեխնիկական կանոնակարգի պահանջների:
4. 13.02.2014թ. N 16-Լ հրամանը համարել ուժը կորցրած:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Գլխավոր տնօրեն

 Ա. Անանյան